



ՎԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» փետրվար 2010թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խանդանյան, ծանոթացա «Անտարես» ՍՊ ընկերության դիմումին «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ-ից 024.866 ՀՀ դրամ վճարելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ

ՊԱՐԶԵՑԻ

«Անտարես» ՍՊ ընկերությունը դիմել է դատարան ընդդեմ «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի՝ 024.866 ՀՀ դրամ պարտքը վճարելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջով:

Ուսումնասիրելով ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը դատարանը գտնում է, որ ներկայացված դիմումը վերաբերում է կողմերի միջև պայմանագրով սահմանված դրամական որոշակի պահանջին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.6 հոդվածով և ըստ էության չստուգելով պահանջի հիմնավորվածությունը, Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ Է

«ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին սույն կարգադրությունը ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում կատարել հետևյալ գործողություններից որևէ մեկը՝

1. կատարել 024.866 դրամ վճարելու պահանջը, եթե պահանջը հիմնավորված է:
2. դատարանին առձեռն կամ փոստով՝ ստացման մասին հետադարձ ծանուցմամբ (տեղեկացմամբ) ներկայացնել գրավոր առարկություն, եթե պահանջը հիմնավորված չէ:

Դուք իրավունք ունեք գրավոր առարկություն ներկայացնել պահանջի միայն մի մասի վերաբերյալ՝ մյուս մասով կատարելով վճարման պահանջը:

Առարկություն ներկայացնելու դեպքում վեճը կարող է քննվել ըստ էության հայցային վարույթով, որի դեպքում պարտվող կողմը կրելու է դատական ծախսերը:

Սույն կարգադրությունը ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում առարկություն չներկայացնելու դեպքում, սույն վճարման կարգադրությունը կստանա օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և կարող է կատարվել հարկադիր կարգով:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԽԱՆԴԱՆՅԱՆ